ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 39-Ա

«14» 04 2025 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ՆԻՍՏՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՄԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան 2025 թվականի մարտի 14-ի նիստում քննարկել է Հայաստանի Հանրապետության դատախազության 2024 թվականի աշխատանքի արդյունքները և ընդունել համապատասխան որոշում, որի կենսագործումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 22-րդ հոդվածի 5-րդ մասով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Ապահովել Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2025 թվականի մարտի 14-ի նիստում ընդունված որոշման կենսագործումը (2025 թվականի մարտի 14-ի նիստի N 1 արձանագրությունը կցվում է):

2. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորիների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Արձանագրություն N 1

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի
2025 թվականի մարտի 14-ի նիստի

Նախագահում էր՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանը:

Մասնակցում էին՝

Կոլեգիայի անդամներ՝ Ա. Արամյանը, Լ. Գրիգորյանը, Ե. Ավագյանը, Էդ. Արսենյանը, Գ. Էլիզբարյանը, Ռ. Մանուկյանը, Ա. Հարությունյանը, Լ. Զարխիֆալակյանը, Վ. Ղահրամանյանը, Ա. Գրիգորյանը, Ա.Փանոսյանը, Լ. Մանուկյանը, Տ. Սարուխանյանը, Ս. Հակոբյանը, Մ. Մկրտչյանը:

Ներկա էին՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի պաշտոնակատար Տ. Ենոքյանը, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի պաշտոնակատար Մ. Հակոբյանը, պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի պաշտոնակատար Ն. Մովսիսյանը, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի պաշտոնակատար Կ. Սերոբյանը, ՀՀ զինվորական դատախազի տեղակալները, ՀՀ զինվորական կենտրոնական բաժինների պետերը, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազները, այլ դատախազներ, ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարը և վերջինիս տեղակալները, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականներն ու օգնականները:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ դատախազության 2024 թվականի աշխատանքների ամփոփում:
2. Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության՝ 2024 թվականի աշխատանքների ամփոփում:
3. Դատախազների, դատախազությունում քաղաքացիական ծառայության և հայեցողական պաշտոն զբաղեցնող, ինչպես նաև քաղաքացիական աշխատանք կատարող անձանց շրջանում անցկացված անանուն հարցման արդյունքների ներկայացում:
4. Առաջին անգամ դատախազի պաշտոն ստանձնող դատախազների երդման արարողություն:

1. Օրակարգի 1-ին հարցով զեկուցողներ՝

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ՝ Ա. Արամյան, Լ. Գրիգորյան, Ե. Ավագյան, Էդ. Արսենյան, Գ.Էլիզբարյան:

Լսեցին՝ Ա. Արամյանին, Լ. Գրիգորյանին, Ե. Ավագյանին, Էդ. Արսենյանին, Գ. Էլիզբարյանին:

Արտահայտվեց՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա. Վարդապետյանը:

Լսելով և քննարկելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներ՝ Ա. Արամյանի, Լ. Գրիգորյանի, Ե. Ավագյանի, Էդ. Արսենյանի և Գ. Էլիզբարյանի զեկուցումները Հայաստանի Հանրապետության դատախազության 2024 թվականի աշխատանքի արդյունքների մասին՝ Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան նշում է, որ դատախազության ստորաբաժանումները, իրականացնելով ՀՀ Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով իրենց վերապահված լիազորությունները, ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ, ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով, զգալի աշխատանք են կատարել ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների պատշաճ իրականացումն ապահովելու ուղղությամբ:

Այսպես.

Գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազների կողմից 2024 թվականի ընթացքում 30 քրեական վարույթ՝ 75 անձի վերաբերյալ (2023 թվականին 30 վարույթ՝ 89 անձի վերաբերյալ), մեղադրական եզրակացությամբ հանձնվել են առաջին ատյանի դատարաններ:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազները 2024 թվականին ձեռնամուխ են եղել առանձնակի բարդություն ներկայացնող՝ շուրջ 100 և ավելի դրվագներ ունեցող քրեական վարույթի (Սուրբ Աթոռում արտակարգ և լիազոր նախկին դեսպան Մ.Մ.-ի կողմից ստեղծված հանցավոր կազմակերպությանը մասնակցելու և այլ ենթադրյալ հանցանքների կատարման մեջ մեղադրվող անձանց վերաբերյալ քրեական վարույթը) ուսումնասիրությանը և քննության առարկա հանդիսացող հանցավոր դրվագներից շատերի ընթացքը լուծելուն: Քրեական վարույթի ուսումնասիրության արդյունքում՝ դատախազի հանձնարարությամբ, 2024 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի բազմաթիվ հոդվածների հատկանիշներով (այդ թվում՝ կոռուպցիոն բնույթի) նախաձեռնվել են քրեական վարույթներ: Նշված վարույթի շրջանակներում վերադաս դատախազի կողմից ձևավորվել է դատախազական խումբ, դատախազական խմբի ղեկավարի կողմից սեփական նախաձեռնությամբ հարուցվել է 33 հանրային քրեական հետապնդում: Դատախազական պատշաճ հսկողության արդյունքում՝ արդեն իսկ որոշ դրվագներով առկա են պետությանը պատճառված վնասի մասով վերականգնումներ (օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունից 2010 թվականին հափշտակված, նույն տարվա ընթացքում իրականացված գնահատման համաձայն՝ 1 միլիարդ 755 միլիոն դրամ արժեքով «Ռադիո» ՓԲ ընկերությունը վերադարձվել է պետությանը. «Ռադիո» ՓԲ ընկերության սեփականատեր «Միջազգային Ռադիոցանց» ՓԲ ընկերության 100

տոկոս բաժնեմասերը 2025 թվականի փետրվարի 12-ին փոխանցվել են Հայաստանի Հանրապետությանը):

2024 թվականի ընթացքում **ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության** դատախազների կողմից մեղադրական եզրակացությամբ դատարան է հանձնվել համացանցի, տեղեկատվական և հեռահաղորդակցական համակարգերի օգտագործմամբ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար մեղադրվող 38 անձի վերաբերյալ 14 վարույթ (2023 թվականին՝ 26 անձի վերաբերյալ 8 քրեական վարույթ): Մեղադրական եզրակացությամբ դատարան հանձնված քրեական վարույթներով մեղադրյալներից 22-ին, բացի իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառությունից, մեղսագրվել է նաև դրանից ստացված առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում: 2024 թվականին դատարան հանձնված քրեական վարույթներով փողերի լվացման համար մեղադրվել է 15 անձ:

Պետական և համայնքային շահերի պաշտպանության ոլորտում 2024 թվականին կատարված ուսումնասիրությունների արդյունքում դատարան է ներկայացվել պետական և համայնքային շահերի պաշտպանության 277 հայցադիմում: Ներկայացված հայցադիմումներով բռնագանձման ենթակա գումարի չափը՝ քաղաքացիական դատավարության կարգով կազմում է 6 միլիարդ 961 միլիոն 786 հազար դրամ, քրեական դատավարության կարգով գույքային հայցերով՝ 420 միլիոն 348 հազար դրամ:

2024 թվականի ընթացքում գումարի բռնագանձման հայցերով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով բավարարվել է 207 միլիոն 583 հազար դրամ հայցապահանջով 43 հայց:

2024 թվականի ընթացքում կայացված դատական ակտերով Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականության իրավունքն է գրանցվել շուրջ 2 միլիարդ 785 միլիոն 511 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով 18 միավոր անշարժ գույքի նկատմամբ (նշված գույքերի շուկայական արժեքները զգալիորեն գերազանցում են շուկայականին մոտարկված կադաստրային արժեքները):

2024 թվականին **մարդու դեմ ուղղված հանցագործություններով** 1228 քրեական վարույթ 1408 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 25-ը դատարան է ուղարկվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությամբ:

2024 թվականի ընթացքում մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով դատարաններում ավարտվել է 707 գործ 790 անձի վերաբերյալ, որոնցից 550-ով 610 անձի վերաբերյալ կայացվել են մեղադրական դատավճիռներ:

2024 թվականի ընթացքում **սեփականության դեմ ուղղված հանցագործությունները** կազմել են Հայաստանի Հանրապետությունում արձանագրված դեպքերի ավելի քան 28%-ը: Միևնույն ժամանակ, 2024 թվականի ընթացքում, 2023 թվականի համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների 149 դեպքով կամ 1,3%-ով նվազում. Երևան քաղաքում դեպքերը նվազել են 298-ով կամ 4,3%-ով:

Միջազգային-իրավական համագործակցության ոլորտում 2024 թվականին ուղարկվել է 365 իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդություն (2023 թվականին՝ 311), ստացվել է 203 իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդություն: Ուղարկվել է ՀՀ իրավասու մարմինների կողմից հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց հանձնելու մասին 34 միջնորդություն (2023 թվականին՝ 28): Ներկայացված հանձնման միջնորդություններից 10-ը բավարարվել է, 5-ը՝ մերժվել, 19-ը գտնվում է քննարկման փուլում, բավարարվել է նախկինում ներկայացված միջնորդություններից 8-ը, մերժվել՝ 8-ը:

Անդրադառնալով **իրավական ապահովման ոլորտում** 2024 թվականին իրականացված աշխատանքներին՝ կարևորվել է, ի թիվս այլնի, քրեական վարույթներով պետությանը, համայնքին, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին և պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման նպատակով վերականգնված միջոցների միասնական հաշվի ստեղծումը:

Դատախազության ստորաբաժանումներից ստացված 12 զեկուցագրերի վերլուծության հիման վրա՝ կազմվել և ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ արդարադատության նախարարին է ներկայացվել դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու 11 միջնորդություն: Ներկայացված 11 միջնորդություններից 3-ը դեռ քննարկման փուլում են, 5-ի դեպքում կարգապահական վարույթ չի հարուցվել, 3-ի դեպքում ՀՀ արդարադատության նախարարի կողմից հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից 1-ի արդյունքում Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին հայտարարվել է նկատողություն, 1-ի դեպքում՝ խիստ նկատողություն, 1-ի դեպքում դատավորի լիազորությունները էական կարգապահական խախտում կատարելու հիմքով դադարեցվել են:

ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից կատարված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է 322 խախտում (2023 թվականին՝ 148): Պատկան մարմիններին ուղարկվել է 52 հաղորդում: Ստուգմամբ արձանագրված՝ օրենսդրությանը հակասող ակտերի վերաբերյալ ներկայացվել է 31 միջնորդագիր, օրենսդրությանը հակասող 3 ակտ կասեցվել է, ծառայողական քննություն իրականացնելու վերաբերյալ ներկայացվել է 9 միջնորդագիր: Արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունում իրականացվել է 11 ուսումնասիրություն՝ արձանագրվել է 107 խախտում: Իրականացված ուսումնասիրություններով և ստուգումներով ներկայացվել են հանցանքի մասին 7 հաղորդում, որոնց արդյունքում նախաձեռնվել են քրեական վարույթներ:

2024 թվականի ընթացքում իրականացվել է 8 կարգապահական վարույթ՝ 9 դատախազի նկատմամբ, որոնց արդյունքում՝ 1 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն» տեսակի կարգապահական տույժ, 4 դատախազ ազատվել է կարգապահական տույժից, իսկ 1 դատախազի կողմից թույլ տրված խախտումները քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցությունում:

2024 թվականի ընթացքում **ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը** սկսել է 163 ուսումնասիրություն (2023 թվականին՝ 82): Վարչության գործունեության օրվանից մինչ այսօր Հակակոռուպցիոն դատարան ներկայացված և ներկայում քննվող հայցադիմումների թիվը 136-ն է, որոնցից 21-ով դատարանի կողմից արդեն կայացվել է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում, և անցում է կատարվել բուն դատաքննության փուլին. ներկայում հետազոտվում են ապացույցները:

Միայն 2024 թվականին Հակակոռուպցիոն դատարան ներկայացված և ներկայում քննվող գործերով հօգուտ Հայաստանի Հանրապետության պահանջվում է բռնագանձել ապօրինի ծագում ունեցող 346 անշարժ գույք, 71 շարժական գույք և 85 իրավաբանական անձանցում մասնակցություններ, բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է 96 միլիարդ 961 միլիոն 344 հազար դրամ: 2024 թվականին ներկայացված հայցադիմումների ընդհանուր հայցագինը կազմում է 100 միլիարդ 354 միլիոն 660 հազար դրամ: Իսկ ընդհանուր առմամբ, դատարաններում քննվող 136 հայցադիմումներով պահանջվում է հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 270 շարժական, 1381 անշարժ գույքեր, 359 իրավաբանական անձանցում մասնակցություններ, դրամական պահանջը կազմում է ավելի քան 527 միլիարդ դրամ, իսկ ընդհանուր հայցագինը՝ շուրջ 600 միլիարդ դրամ է (այս թիվն ունի աճման միտում՝ պայմանավորված նրանով, որ ներկայում ոչ բոլոր գույքերի շուկայական արժեքն է պարզված, պարզված չեն նաև իրավաբանական անձանցում մասնակցությունների արժեքները):

2024 թվականի ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործառույթի շրջանակում կնքվել է հաշտության 4 համաձայնություն, որոնցից մեկով Հայաստանի Հանրապետությանն է փոխանցվել Երևան քաղաքում գտնվող 1 անշարժ գույք (որի շուկայական արժեքը կազմում է 2 միլիարդ 18 միլիոն 400 հազար դրամ), իսկ մյուս 3 հաշտության համաձայնություններով՝ փոխանցման է ենթակա ընդհանուր 858 միլիոն 972 հազար դրամ, որից 2024 թվականին փոխանցվել է 515 միլիոն դրամը: Կնքված հաշտության համաձայնությունների ընդհանուր հանրագումարային արժեքը կազմում է շուրջ 2 միլիարդ 877 միլիոն 372 հազար դրամ (2023 թվականին հաշտության համաձայնությունների կնքման արդյունքում Հայաստանի Հանրապետությանն է փոխանցվել 6 անշարժ, 1 շարժական գույք, որոնց շուկայական արժեքը կազմում է 2 միլիարդ 102 միլիոն դրամ, իսկ փոխանցված դրամական միջոցները՝ 80 միլիոն դրամ):

2024 թվականի ընթացքում կայացվել են հայցադիմումն ամբողջությամբ բավարարելու մասին 1 և մասնակի բավարարելու մասին 4 վճիռներ:

Օրինական ուժի մեջ է մտել հայցադիմումն ամբողջությամբ բավարարելու վերաբերյալ 1 վճիռ: Օրինական ուժի մեջ մտած՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առաջին վճռով՝ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքն է գրանցվել Երևան քաղաքի Վարդանանց փողոցում գտնվող 1 բնակարանի և Կոտայքի մարզի Առինջ համայնքում գտնվող 1 բնակելի տան նկատմամբ (ընդհանուր 300 միլիոն 650 հազար դրամ միջին շուկայական արժեքով):

2024 թվականի ընթացքում **Զինված ուժերի համակարգում արձանագրվել է** 2093 դեպք (2023 թվականին՝ 2358 դեպք): Դեպքերից 762-ը եղել են պատահարներ (2023 թվականին՝ 803), 1331-ը ենթադրյալ հանցագործության դեպքեր (2023 թվականին՝ 1555), այդ թվում՝ 715-ը՝ զինվորական (2023 թվականին՝ 847), 616-ը՝ այլ հանցագործություններ (2023 թվականի՝ 708), 178-ը՝ ծանր (2023 թվականին՝ 242), 39-ը՝ առանձնապես ծանր հանցագործություններ (2023 թվականին՝ 78):

2024 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերում զոհվել (մահացել) է 40 զինծառայող, որից ծառայության հետ կապված հանգամանքներում՝ 27 զինծառայող (հակառակորդի կողմից՝ 4 ԵԿՄ անդամ, սպանության հետևանքով՝ 5, որից՝ 1 ԵԿՄ անդամ, 1 վարժական հավաքի մասնակից (հրդեհ), ինքնասպանություն և ինքնասպանության հասցնել՝ 7, ճանապարհատրանսպորտային պատահար՝ 4, մարտական մեքենաներ վարելու կանոնների խախտում՝ 1, ավիավթար՝ 2, հիվանդություն՝ 3, որից 1 ԵԿՄ անդամ և դժբախտ պատահար՝ 1), ծառայության հետ չկապված հանգամանքներում՝ 13 զինծառայող (հիվանդություն՝ 3, ճանապարհատրանսպորտային պատահար՝ 7, ինքնասպանություն՝ 1, դժբախտ պատահար՝ 2):

2024 թվականին դատախազների կողմից հաստատված մեղադրական եզրակացությամբ դատարան է հանձնվել 904 քրեական վարույթ՝ 1026 անձի վերաբերյալ (2023 թվականին՝ 975 քրեական վարույթ՝ 1275 անձի վերաբերյալ):

2024 թվականին 937 քրեական գործ՝ 1089 անձի վերաբերյալ, քննվել և ավարտվել է դատարանում (2023 թվականին՝ 496 գործ՝ 578 անձի վերաբերյալ), 751 քրեական գործով՝ 842 անձի վերաբերյալ, կայացվել է մեղադրական դատավճիռ (2023 թվականին՝ 394 քրեական գործ՝ 426 անձի վերաբերյալ):

Զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի և կայազորների զինվորական դատախազությունների կողմից 2024 թվականին իրականացված ուսումնասիրություններով պետությանը պատճառված վնասի չափը կազմել է 5 միլիարդ 677 միլիոն 550 հազար դրամ (2023 թվականին՝ 5 միլիարդ 62 միլիոն 243 հազար դրամ): Արտադատական կարգով 2024 թվականին վերականգնվել է 4 միլիարդ 462 միլիոն 706 հազար դրամ (2023 թվականին՝ 2 միլիարդ 482 միլիոն 453 հազար դրամ):

Օրակարգի 2-րդ հարցով զեկուցմամբ հանդես եկավ Կ. Սերոբյանը.

2024 թվականին կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ դեպքերով քննված քրեական վարույթներից **ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության** կողմից դատարան է ուղարկվել 159 քրեական վարույթ՝ 370 անձի վերաբերյալ: Նույն ժամանակահատվածում կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ դատարաններում ավարտվել է 104 քրեական գործ (2023 թվականին՝ 87)՝ 223 անձի վերաբերյալ (2023 թվականին՝ 120 անձի վերաբերյալ): Նշված քրեական գործերից 95-ով՝ 207 անձի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ, որոնցից 167-ը դատապարտվել են ազատազրկման:

Ավարտված գործերով պատճառված ընդհանուր վնասից նախաքննության ընթացքում վերականգնվել է 477 միլիոն 556 հազար (2023 թվականին՝ 417 միլիոն 346 հազար դրամ):

Վարույթներից մեկով՝ ընդհանուր՝ 14 միլիոն 443 հազար դրամ կադաստրային արժեքով 8 հողամաս վերադարձվել է համայնքին:

Օրակարգի 3-րդ հարցով՝ ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Լուսինե Մարտիրոսյանը և ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ Լալա Բեգոյանը ներկայացրեցին 2024 թվականի ընթացքում դատախազների, դատախազության քաղաքացիական ծառայողների, հայեցողական պաշտոն զբաղեցնող և քաղաքացիական աշխատանք կատարող անձանց շրջանում անցկացված անանուն հարցման արդյունքները:

Դատախազության 2024 թվականի աշխատանքների ամփոփումները եզրափակելով՝ Աննա Վարդապետյանը տվեց մի շարք հանձնարարականներ, այդ թվում՝ տարեկան երկու անգամ մարզերի և վարչական շրջանների դատախազությունների աշխատանքի գնահատման նպատակով ամփոփում կատարելու վերաբերյալ:

Աննա Վարդապետյանն իր եզրափակիչ խոսքում շնորհակալություն հայտնելով դատախազներին սրտացավ և նվիրված աշխատանքի համար, նշեց, որ 2025 թվականի ընթացքում աշխատանքային այցով եղել է դատախազության 15 ստորաբաժանումում, տեսել է աշխատանքի որակի, քանակի և ծավալի դրական փոփոխություն:

ՀՀ գլխավոր դատախազը նշեց, որ տարեկան երկու անգամ (հուլիսի վերջին՝ կիսամյակային և փետրվարին՝ տարեկան) կատարվելու է մարզերի և վարչական շրջանների դատախազությունների աշխատանքի գնահատում:

Գնահատումն իրականացվելու է, ի թիվս այլնի, հիմք ընդունելով հետևյալ չափանիշները՝

- Քրեական վարույթներով պետությանը, համայնքներին, պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններին պատճառված վնասի հատուցման գումարի չափը:
- Պետական և համայնքային շահերի պաշտպանության հայցերով պետությանը և համայնքին վերջնական դատական ակտով վերադարձված գումարի չափը:
- Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով մեղադրական եզրակացությամբ դատարան հանձնված քրեական վարույթների թիվը:
- Ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով վերջնական դատական ակտերի թիվը:

ՀՀ գլխավոր դատախազն իր խոսքում շնորհավորեց նաև դատախազի պաշտոնն առաջին անգամ ստանձնող դատախազներին, հույս հայտնեց, որ վերջիններս կինտեգրվեն դատախազության կուռ կառուցվածքին, կստանձնեն այն պատասխանատվությունն ու հոգատար վերաբերմունքը, որ դատախազությունում առկա է յուրաքանչյուր աշխատակցի նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից՝

ԿՈԼԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1) ՀՀ դատախազության կառուցվածքային և տարածքային բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ պատշաճ ուշադրություն դարձնել ՀՀ գլխավոր դատախազությունից ուղարկված շրջաբերականներին և դրանցով ներկայացված փաստաթղթերին՝ հսկողություն սահմանելով դրանց կատարման նկատմամբ:

2) Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝ մինչև հուլիս և փետրվար ամիսների վերջին աշխատանքային օրը ՀՀ գլխավոր դատախազի կողմից նշված չափանիշներին համապատասխան ամփոփել և ՀՀ գլխավոր դատախազին ներկայացնել տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակահատվածում մարզերի և վարչական շրջանների դատախազությունների աշխատանքի վերաբերյալ:

3) Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման և Միջազգային-իրավական համագործակցության վարչությունների պետերին՝ ուսումնասիրել ՀՀ իրավասու մարմինների կողմից հայտարարված ներպետական, միջպետական և միջազգային հետախուզումների վիճակը և մինչև 2025 թվականի սեպտեմբերի 1-ը արդյունքները ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ՝

Երդման տեքստն ընթերցեցին և ստորագրեցին՝

1. Արմեն Եղիշեի Գրիգորյան - Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության դատախազ,
2. Տիգրան Մուխաելի Վարդանյանին - Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ,
3. Հրաչյա Լևոնի Թորոսյանին - Կոտայքի մարզի դատախազության դատախազ,
4. Հրանտ Մարատի Պողոսյան - Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ,
5. Արևիկ Տիգրանի Ավոյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ,
6. Տաթևիկ Լեոնիկի Մարտիրոսյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ,
7. Վիոլետա Արտաշեսի Հովհաննիսյան - Արմավիրի մարզի դատախազության դատախազ,
8. Գայանե Սուրենի Մանուկյան - Տավուշի մարզի դատախազության դատախազ,
9. Անահիտ Հայկի Այվազյան - Տավուշի մարզի դատախազության դատախազ,
10. Արտուշ Հրաչյայի Կարապետյան - Շիրակի կայազորի զինվորական դատախազության դատախազ,
11. Ռիմա Տիգրանի Ասոյան - Լոռու մարզի դատախազության դատախազ,

12. Նարեկ Ռուբենի Աբրահամյան - Շիրակի մարզի դատախազության դատախազ,

13. Սամվել Վահրամի Հակոբյան - Կոտայքի մարզի դատախազության դատախազ,

14. Անի Անդրանիկի Կիրակոսյան - Տավուշի մարզի դատախազության դատախազ,

15. Հասմիկ Արտյուշայի Հարությունյան - Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ,

16. Մերի Կարենի Հովհաննիսյան - Շիրակի մարզի դատախազության դատախազ՝ գործուղված ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի թափուր հաստիքին,

17. Դավիթ Էդվարդի Գրիգորյան - Լոռու մարզի դատախազության դատախազ՝ գործուղված ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի թափուր հաստիքին,

18. Արմեն Սուրենի Մաթևոսյան - Տավուշի կայազորի զինվորական դատախազության դատախազ՝ գործուղված ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի թափուր հաստիքին,

19. Նորայր Սամվելի Նազարյան - Սիսիանի կայազորի զինվորական դատախազության դատախազ՝ գործուղված ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի թափուր հաստիքին,

20. Դավիթ Վահրամի Մեյրոյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ,

21. Քրիստինե Արայի Գաբուզյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ,

22. Նարեկ Արմենի Բարեկյան - Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ:

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ՝ **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **Մ. ՄԿՐՏՉՅԱՆ**